

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

*«Բարձրագույն կրթության որակի ապահովման
համակարգի համապատասխանեցումը
Եվրոպական (ENQA) ստանդարտներին և
ուղենիշներին*

ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա.Ս. ԲՈՒԴԱՂՅԱՆ

**ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱՎԱՐԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

Ե Ր Ե Վ Ա Ն 2007

Սույն փաստաթուղթը ստեղծվել է **Բաց Հասարակության Ինստիտուտի Աջակցության Հիմնադրամի Հայաստանյան Մասնաճյուղի** ֆինանսական հովանավորությամբ՝ *Բարձրագույն կրթության աջակցման ծրագրի* շրջանակներում:

Հեղինակներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Հիմնադրամին՝ նախագծի ֆինանսավորման և իրականացման բոլոր փուլերում ցուցաբերած աջակցության համար:

Բովանդակություն

Նախաբան

Ներկա փաստաթուղթը նպատակ ունի ստեղծելու հայեցակարգային հենք՝ բարձրագույն կրթության որակի ապահովման բարեփոխումների ռազմավարության համար: Այն էապես հենվում է *“Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում”* վերլուծական զեկույցում¹ (բաժին 6) ներկայացված իրավիճակի համադրական վերլուծության և երաշխավորությունների վրա, որոնք այստեղ ամփոփվում և ձևակերպվում են կոնկրետ հայեցակարգային դրույթների տեսքով:

Փաստաթղթի հիմնական խնդիրներն են.

1. Բացահայտել որակի ապահովման/հավատարմագրման գործող համակարգի թույլ կողմերն ու հիմնախնդիրները և ձևակերպել նրա բարեփոխումների հիմնական նպատակները, խնդիրները և ուղղորդիչ սկզբունքները;
2. Ներկայացնել երաշխավորություններ որակի ներքին ապահովման (ներքուհական) համակարգի ձևավորման համար;
3. Ներկայացնել երաշխավորություններ որակի արտաքին գնահատման/հավատարմագրման գործող համակարգի վերակառուցման վերաբերյալ;
4. Ներկայացնել երաշխավորություններ լիցենզավորման և հավատարմագրման առկա ծառայության վերակազմակերպման վերաբերյալ՝ որպես որակի արտաքին ապահովման/հավատարմագրման ազգային գործակալություն:

Փաստաթուղթը, համապատասխանաբար, ընդգրկում է 4 բաժիններ՝ նվիրված վերոհիշյալ 4 խնդիրներին:

Փաստաթղթի համար մեթոդաբանական հիմք են ծառայել *Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակի ապահովման ստանդարտներն ու ուղենիշները*² (այսուհետև՝ *Եվրոպական ստանդարտներ*): Լայնորեն օգտագործվել է

¹ Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. “Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: Երևան, Բարձրագույն կրթության Ռազմավարական Հետազոտությունների ազգային կենտրոն, 2007. 214 էջ:

² Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Helsinki, 2007. 38p (2nd edition).

Եվրոպական երկրների (Շվեդիա, Նորվեգիա, Ղանիա, Ֆինլանդիա, Պորտուգալիա) նորագույն փորձը՝ որակի ապահովման ազգային համակարգերի և գործակալությունների վերակառուցման և եվրոպական ստանդարտներին համապատասխանեցման վերաբերյալ:

Փաստաթուղթը կարող է ուղղորդիչ դեր խաղալ որակի ապահովման առկա համակարգի վերակառուցման և եվրոպական ստանդարտներին համապատասխանեցման գործընթացում, հիմք հանդիսանալով համապատասխան ռազմավարության մշակման համար: Այն կարող է օգտակար լինել նաև որակի ապահովման ներբուհական համակարգերի կառուցման համար:

Հաշվի առնելով էական բացը կրթական ծրագրերի և հատկապես դրանց ելքային արդյունքների արտաքին գնահատման չափանիշների ասպարեզում, հավելվածում բերված են ընդհանուր երաշխավորություններ այդ չափանիշների կազմի և ձևակերպումների վերաբերյալ՝ եվրոպական փորձագիտական խմբի առաջարկությունների³ հիման վրա, որոնք արտացոլում են Բոլոնիայի գործընթացով և *Որակավորումների համաեվրոպական հենքով*⁴ սահմանված ընդհանուր ելքային պահանջները բակալավրի և մագիստրոսի ծրագրերի/որակավորումների նկատմամբ:

Հեղինակները շնորհակալությամբ կընդունեն փաստաթղթի բարելավմանն ու զարգացմանն ուղղված դիտողություններ և առաջարկություններ:

Յու. Սարգսյան, Ա. Բուդաղյան

³ Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.

⁴ A Framework for Qualifications of the European Higher Education Area. Bologna Working Group on Qualifications Frameworks. Ministry of Science, Technology and Innovation of Denmark. February 2005. 200p.

1. Որակի ապահովման գործող համակարգը. հիմնական բնութագրեր, հիմնախնդիրներ և բարեփոխումների ուղենիշներ

1.1. Համակարգի առկա օրենսդրական հենքը և հիմնական բնութագրերը

- ❖ Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացները (լիցենզավորում, հավատարմագրում և ընթացիկ ատեստավորում) և առնչվող մարմինների լիազորությունները այդ բնագավառում կարգավորվում են *Կրթության*⁵ (1999) և *ԲՀՄԿ*⁶ (2004) մասին ՀՀ օրենքներով, ինչպես նաև *Լիցենզավորման և հավատարմագրման կարգով*⁷ (ՀՀ կառավարության որոշում թիվ 372, 07.07. 2000թ.):
- ❖ Օրենսդրորեն սահմանված է, որ բարձրագույն կրթության համակարգում որակի վերահսկման և հավատարմագրման պատասխանատվությունը ամբողջությամբ դրված է կրթության կառավարման լիազորված մարմնի՝ ԿևԳ նախարարության վրա, որն այն իրականացնում է *լիցենզավորման և հավատարմագրման ծառայության միջոցով*: Ծառայությունը պաշտոնապես ճանաչված է որպես բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման (հավաստման) համար իրավասու մարմին, ունի օրենքով սահմանված իրավական կարգավիճակ և գործում է ազգային օրենսդրության շրջանակներում, ինչը և պահանջում է համապատասխան *Եվրոպական ստանդարտը*:
- ❖ Նշված օրենքներում որպես կրթական ծրագրերի որակի գնահատման չափանիշ ընդունված է մասնագիտական պետական կրթական չափորոշիչը,

⁵ ՀՀ Օրենքը Կրթության մասին, ընդունված 14.04.1999թ.

⁶ ՀՀ Օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, ընդունված 14.12.2004թ.

⁷ Կարգ Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման: Հաստատված է ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N372 որոշմամբ:

Կարգ Հայաստանի Հանրապետությունում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման: Հաստատված է ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N372 որոշմամբ:

որը մշակվում և հաստատվում է կրթության կառավարման պետական լիազորված մարմնի (ԿԳՆ) կողմից: Չափորոշիչը սահմանում է որոշակի նորմատիվային պահանջներ միայն կրթական ծրագրերի նվազագույնի, դրանց բովանդակության և շրջանավարտների գիտելիքների ընդհանուր մակարդակի վերաբերյալ, չանդրադառնալով բուհի ընդհանուր գործունեության (ուսումնական, գիտական և օժանդակ ծառայություններ) արդյունավետության հարցերին:

❖ ԲՀՄԿ մասին օրենքն իր մի շարք հոդվածներում անդրադառնում է բարձրագույն կրթության որակի ապահովման հարցերին: 11-րդ հոդվածը սահմանում է բուհերի խնդիրները՝ դրանց թվում նշելով նաև կրթության որակի ապահովման և բարելավման համապատասխան համակարգի ներդրման խնդիրը: Հոդված 13-ում ներկայացվում են բուհերի և կրթական ծրագրերի լիցենզավորման և պետական հավատարմագրման հիմնական սկզբունքները, իսկ հոդված 21-ը և 22-ը սահմանում են լիազորված մարմնի իրավասությունը որակի ապահովման ասպարեզում, այդ թվում՝

- պետական կրթական չափորոշիչների մշակումն ու հաստատումը,
- որակի վերահսկողության իրականացումը (լիցենզավորում, հավատարմագրում և ընթացիկ ատեստավորումներ),
- բուհերում կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի հաստատումը:

❖ Թեև նշված օրենքները և դրանց հիման վրա մշակված ենթաօրենսդրական հիմքը որոշակի նախադրյալներ են ստեղծում բարձրագույն կրթության որակի ապահովման/հավատարմագրման գործընթացներ իրականացնելու համար, այնուամենայնիվ, առկա են մի շարք սկզբունքային անհամապատասխանություններ օրենսդրության և *Եվրոպական ստանդարտների* միջև, հատկապես որակի արտաքին ապահովման ասպեկտով, որոնց կանդրադառնանք 1.2-ում:

❖ Որակի արտաքին գնահատման/հավատարմագրման գործող մոդելը կառուցված է ՌԴ նախատիպի հիման վրա և առանց էական փոփոխությունների օգտագործվում է մինչ այժմ՝ ոչ պետական բուհերի և դրանց

մասնագիտությունների հավատարմագրման համար: Այն նախատեսում է հետևյալ քայլերը՝

- բուհի ինքնավերլուծության և համապատասխան գեկույցի ներկայացում,
- արտաքին փորձագիտական գնահատում,
- բուհի շրջանավարտների ատեստավորում,
- եզրակացության մշակում բուհի (մասնագիտությունների) հավատարմագրման վերաբերյալ:

1.2. Համակարգի հիմնական թերությունները և հիմնախնդիրները

Որակի ապահովման ասպարեզում իրավիճակի վերլուծությունը բացահայտում է համակարգի հետևյալ հիմնական թերությունները և հիմնախնդիրները.

1. Որակի արտաքին ապահովման համար իրավասու մարմինը՝ «*Հիցենզավորման և հավատարմագրման պետական ծառայությունը*, իր առկա կարգավիճակով և մասնագիտական ներուժով լիարժեք չի իրականացնում իր օրենսդրական լիազորությունները և չի համապատասխանում *Եվրոպական ստանդարտներով* որակի ապահովման ազգային գործակալություններին ներկայացվող պահանջներին՝ գործառնական անկախության, ռեսուրսների, արդյունավետության և հաշվետվականության վերաբերյալ:
2. Օրենսդրորեն և կազմակերպական առումով տարանջատված չեն կրթական ծրագրերի և բուհերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացները, հավատարմագրման գործող մոդելը, չափանիշներն ու ընթացակարգերը զգալիորեն շեղվում են *Եվրոպական ստանդարտներից*:
3. Արտաքին փորձագիտական գնահատում իրականացնող կազմակերպության ընտրությունը կատարում է հավատարմագրվող բուհը, ինչը կարող է իջեցնել փորձաքննության արդյունքների և եզրակացությունների անաչառությունն ու հուսալիությունը: Միաժամանակ, այն չի ապահովում միասնական չափանիշների և ընթացակարգերի կիրառումը:

4. Ղեռնա չի մշակվել անհրաժեշտ օրենսդրական/ընթացակարգային հենք՝ որակի ներքին ապահովման (ներքուհական) համակարգերի ձևավորման համար, բուհերը չունեն սահմանված քաղաքականություն և ընթացակարգեր՝ իրենց կրթական ծրագրերի որակի գնահատման և արտաքին հաշվետվականության համար:
5. Որակի ապահովման/հավատարմագրման գործող համակարգը հիմնականում վերահսկողական բնույթ ունի և միտված չէ բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանը:
6. Որակի արտաքին գնահատման/հավատարմագրման գործընթացները չունեն սահմանված պարբերականություն, չեն ավարտվում որակի հետագա բարելավումն ուղղորդող եզրակացություններով և այս ուղղությամբ հավատարմագրվող բուհերի գործողությունների վերահսկողության ընթացակարգերով:
7. Որակի գնահատման/հավատարմագրման գործող ընթացակարգերը չեն նախատեսում ուսանողների և գործատուների մասնակցությունը, ինչը *Եվրոպական ստանդարտների* պահանջն է⁸:
8. Համակարգը չունի որակի գնահատման/հավատարմագրման վերաբերյալ եզրակացությունների բողոքարկման համարժեք ներքին կարգ և սահմանված մեխանիզմներ:
9. Հայաստանը համակարգային մակարդակով դեռևս չի մասնակցում բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական համագործակցության ծրագրերին և չի անդամակցում համապատասխան Եվրոպական կառույցներին (ENQA⁹, ECA¹⁰, INQAAHE¹¹ և այլն):

Նշված թերությունների և հիմնախնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արմատական վերակառուցման և *Եվրոպական ստանդարտներին* համապատասխանեցման կարիք ունեն համակարգի բոլոր 3 հիմնական բաղկացուցիչները՝

– Լիցենզավորման և հավատարմագրման ծառայությունը,

⁸ Student Involvement in the Processes of Quality Assurance Agencies. ENQA Workshop Reports, Helsinki, 2006. 48p.

⁹ European Association for Quality Assurance in Higher Education

¹⁰ European Consortium for Accreditation

¹¹ International Network of Quality Assurance Agencies in Higher Education

- Որակի արտաքին ապահովման համակարգը,
- Որակի ներքին ապահովման (ներբուհական) համակարգերը:

1.3. Համակարգի վերակառուցման հիմնական նպատակները, խնդիրները և սկզբունքները

- ❖ Որակի ապահովման գործող համակարգի վերակառուցման հիմնական նպատակներն են.
 - ա) Ապահովել բարձրագույն կրթության որակի չափանիշների պահպանումը, շարունակական բարելավումը և այս ասպարեզում հասարակության շահերի պաշտպանությունը;
 - բ) Համապատասխանեցնել համակարգը *Եվրոպական ստանդարտների* պահանջներին, բարձրացնելով նրա արդյունավետությունն ու հուսալիությունը;
 - գ) Նպաստել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրմանը ԵԲԿՏ-ում¹²:
- ❖ Ձևակերպված նպատակներից և *Եվրոպական ստանդարտների* պահանջներից բխում են բարեփոխումների հետևյալ հիմնական խնդիրները.
 1. Վերակազմակերպել ՀՀ լիցենզավորման և հավատարմագրման գործող ծառայությունը *Եվրոպական ստանդարտներով* պահանջվող մասնագիտական կարողությամբ և գործառնական անկախությամբ օժտված որակի ապահովման ազգային գործակալության;
 2. Վերակառուցել որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործող համակարգը՝ *Եվրոպական ստանդարտներին* համաձայն;
 3. Ստեղծել միասնական կանոնակարգային/ընթացակարգային հենք՝ որակի ապահովման ներբուհական համակարգերի ձևավորման համար;

¹² Եվրոպական բարձրագույն կրթության տարածք:

4. Փոխադարձ կապ ստեղծել որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացների և չափանիշների միջև;
 5. Որակի ապահովման գործընթացներում ապահովել որակի կայուն բարելավման հեռանկարը;
 6. Ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ և մեխանիզմներ՝ որակի ապահովման ասպարեզում ուսանողների, գործատուների, բուհերի հիմնադիրների և նրանց ֆինանսավորող կազմակերպությունների շահերի արտացոլման և պաշտպանության համար;
 7. Ներդաշնակեցնել որակի ապահովման համակարգի նախատեսվող փոփոխությունները Բոլոնիայի այլ ուղղություններով ծրագրվող բարեփոխումների հետ (որակավորումների ազգային հենք, կրեդիտային համակարգ, կառուցվածքային/ծրագրային ռեֆորմ և այլն):
- ❖ Համակարգի վերակառուցման (նոր համակարգի ձևավորման) գործընթացը առաջարկվում է ուղղորդել հետևյալ հիմնական սկզբունքներով.
- Ապագա համակարգի հիմքը պետք է կազմեն որակի ապահովման *Եվրոպական ստանդարտներն ու ուղենիշները:*
 - Նորաստեղծ համակարգը պետք է ապահովի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացների անկախությունը բուհերից և պետական կառույցներից:
 - Բուհերը կրում են առաջնային պատասխանատվություն կրթական ծրագրերի որակի չափանիշների պահպանման և ուսուցման որակի բարելավման համար, որն իրականացվում է որակի ապահովման ներբուհական համակարգերի ստեղծման և որակի կուլտուրայի զարգացման միջոցով:
 - Որակի ապահովման ներբուհական համակարգերը պետք է համատեղեն որակի ապահովման և որակի համար բուհերի արտաքին հաշվետվականության գործընթացները:
 - Համակարգը պետք է երաշխավորի որակի ապահովման/ հավատարմագրման գործընթացների թափանցիկությունը, արտաքին, այդ թվում,

միջազգային փորձագետների, ուսանողների, գործատուների պարտադիր մասնակցությունն այդ գործընթացներում:

- Համակարգը պետք է ապահովի երկրի լիարժեք մասնակցությունը որակի ապահովման եվրոպական համագործակցությանը՝ ԵԲԿՏ ծրագրերում և կառույցներում:
- Որակի գնահատման/հավատարմագրման բոլոր գործընթացները պետք է եզրափակվեն գնահատման օբյեկտի հետագա բարելավման երաշխավորություններով և դրանց իրականացման հսկողության ընթացակարգերով:
- Որակի ներքին գնահատումը (ինքնագնահատումը) պետք է հիմք ծառայի որակի արտաքին գնահատման համար, իսկ վերջինս պետք է հաշվի առնի որակի ներքին գնահատման համակարգերի արդյունավետությունը:

2. Երաշխավորություններ որակի արտաքին ապահովման համակարգի վերաբերյալ

2.1. Համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները

- ❖ Համաձայն *Եվրոպական ստանդարտների*՝ որակի արտաքին ապահովման համակարգի հիմնական նպատակներն են՝
 - բարձրագույն կրթության ազգային (պետական) կրթական չափորոշիչների պահպանումը,
 - կրթական ծրագրերի և/կամ բուհերի գնահատումն ու հավատարմագրումը,
 - հասարակությանը հավաստի տեղեկատվության տրամադրումը կրթական ծրագրերի և բուհերի վերաբերյալ,
 - սովորողների իրավունքների պաշտպանությունը,
 - որակի բարելավումն ու բարձրացումը:
- ❖ Համակարգի հիմնական խնդիրներն են՝
 - ապահովել որակի արտաքին գնահատման ու հավատարմագրման գործընթացների թափանցիկությունն ու ընկալելիությունը,
 - խթանել բուհերի զարգացումը, կրթական և գիտական առաջընթացը,
 - բարձրացնել բարձրագույն կրթության բոլոր շահեկիցների (ուսանողներ, գործատուներ, դասախոսներ և այլք) տեղեկացվածությունն ու շահագրգռվածությունը բարձրագույն կրթության գործընթացների և արդյունքների վերաբերյալ,
 - օժանդակել բուհերին որակի ապահովման և կառավարման իրենց խնդիրներում:
- ❖ Որակի արտաքին ապահովման գործընթացները կառուցելիս առաջարկվում է հաշվի առնել հետևյալ պայմանները.

- Չխախտել գնահատման ենթակա բուհերի ինքնավարության սկզբունքները;
- Առաջնային համարել ուսանողների և աշխատաշուկայի ներկայացուցիչների շահերը;
- Որտեղ և որքան հնարավոր է, օգտագործել բուհերի որակի ներքին ապահովման/գնահատման արդյունքները;
- Դուրս չգալ արտաքին գնահատման սահմանված խնդիրների շրջանակներից, ավելորդ բեռ և խոչընդոտներ չստեղծել գնահատվող բուհի բնականոն գործունեության իրականացման համար:

2.2. Համակարգի կառուցման հիմնական ուղենիշներն ու սկզբունքները

- ❖ Համակարգն ունի որակի ապահովման/հավատարմագրման մեկ ազգային գործակալություն՝ բարձրագույն կրթության բոլոր 3 աստիճանների կրթական ծրագրերի և բուհերի ընդգրկմամբ:
- ❖ Բուհերին և նրանց կրթական ծրագրերին միջազգային հավատարմագրման իրավունք¹³ է վերապահվում՝ ինքնաֆինանսավորման հիմունքներով, ինչը պետական բուհերին չի ազատում Հայաստանյան գործակալության կողմից պարտադիր հավատարմագրման գործընթացից:
- ❖ Որակի գնահատման համար բուհերը կարող են ընտրել նաև այլ եվրոպական կամ ազգային օպերատոր, որի եզրակացությունները կարող են ընդունվել կամ մերժվել Գործակալության կողմից՝ հավատարմագրման վերաբերյալ որոշումներ ընդունելիս:
- ❖ Համակարգն ունի որակի գնահատման և հավատարմագրման 2 մակարդակ՝ կրթական ծրագրերի (մասնագիտությունների) և բուհերի:

¹³ Report to the London Conference of Ministers on a European Register of Quality Assurance Agencies. ENQA, Helsinki, 2007. 29p.

- ❖ Իրականացվում է հավատարմագրման երկփուլ գործընթաց՝ նորաստեղծ կրթական ծրագրերի նախահավատարմագրում՝ լիցենզավորման վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար և գործող ծրագրերի հավատարմագրում¹⁴:
- ❖ Նորաստեղծ կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացը երաշխավորվում է սկսել դրանց գործողության լրիվ փուլի ավարտից հետո միայն՝ սահմանված պահանջներին և չափանիշներին դրանց բավարարումն ապահովելու նպատակով:
- ❖ Ծրագրերի մակարդակով հավատարմագրումը, որն ունի վերահսկողական ուղղվածություն, երաշխավորվում է զուգորդել բուհերի ակադեմիական աուդիտի հետ¹⁵, որ միտված է հիմնականում որակի բարելավմանը: Ակադեմիական աուդիտը ներմուծվում է որպես բուհի գործունեության արդյունավետության և որակի շարունակական վերահսկման և բարելավման նպատակով ստեղծված որակի ապահովման ներքին համակարգի արտաքին գնահատման գործընթաց (մեթոդ):
- ❖ Նոր կրթական ծրագրերի (մասնագիտությունների) լիցենզավորման վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է կրթության կառավարման լիազորված մարմինը (ԿԵՆ)՝ Գործակալության եզրակացության հիման վրա՝ հաշվի առնելով ծրագրի (մասնագիտության) տնտեսական նպատակահարմարությունը, աշխատաշուկայի պահանջարկը, բարձրագույն կրթության և գիտության զարգացման ազգային գերակայությունները և այլ չափանիշներ (բուհերի կողմից ծրագրերի անհարկի կրկնություն և այլն):

2.3. Արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներ և ընթացակարգեր

¹⁴ Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.

¹⁵ Quality procedures in European Higher Education. An ENQA survey, ENQA Occasional Papers 5, Helsinki, 2003. 41p.

- ❖ Բուհերի արտաքին գնահատման ընթացակարգերն ուղղվում են հիմնականում որակի գնահատման/ապահովման ներբուհական ընթացակարգերի արդյունավետության և սահմանված չափանիշներին համապատասխանության որոշմանը:
- ❖ Որակի արտաքին գնահատման գործընթացների նպատակներն ու խնդիրները սահմանվում են բուհերի և որակի արտաքին գնահատման այլ շահեկիցների մասնակցությամբ և հրապարակվում մինչև Գործակալության կողմից այդ գործընթացների անմիջական մշակումը:
- ❖ Գործընթացները պետք է նախագծվեն այնպես, որպեսզի կարողանան ապահովել սահմանված նպատակների և խնդիրների ձեռքբերումը:
- ❖ Որակի արտաքին գնահատման արդյունքում ընդունված բոլոր եզրակացություններն ու որոշումները պետք է հիմնվեն նախօրոք հրապարակված և համարժեքորեն կիրառված չափանիշների վրա:
- ❖ Կրթական ծրագրերի հավատարմագրումն իրականացվում է ընդհանուր և տվյալ մասնագիտական ասպարեզին հատուկ չափանիշների հիման վրա, որոնց համակցությունը պետք է ներկայացնի գնահատվող կրթական ծրագրի որակի համակողմանի պատկերը:
- ❖ Բարձրագույն կրթության տվյալ աստիճանի համար ընդհանուր չափանիշները երաշխավորվում է սահմանել որակավորումների ԵԲԿՏ հենքի¹⁶ (*Ղուբլինյան բնութագրիչների¹⁷*) կիրառմամբ:
- ❖ Մասնագիտական ասպարեզին բնորոշ չափանիշները պետք է բնութագրեն ծրագրի մուտքը, գործընթացները և ելքային կրթական արդյունքները՝ եվրոպական չափանիշներին համապատասխան և հնարավորության դեպքում հաշվի առնեն համապատասխան բնագավառներում մասնագիտական ընկերակցությունների կողմից միջազգայնորեն կիրառվող չափանիշները:

¹⁶ The framework of qualifications for the European Higher Education Area. An overarching framework for qualifications in the EHEA adopted by the European Ministers Responsible for Higher Education in the Bergen Conference in 19-20 May, 2005. 2p.

¹⁷ Shared 'Dublin' descriptors for Short Cycle, First Cycle, Second Cycle and Third Cycle Awards. A report from a Joint Quality Initiative informal group. 18 October 2004. 5p.

- ❖ Պետք է երաշխավորվի Գործակալության կողմից հավատարմագրման չափանիշների ձևակերպման գործընթացների բավարար անկախությունը հավատարմագրման ենթական հաստատություններից, ապահովելով միաժամանակ փոխազդեցությունը Գործակալության և համապատասխան օրենսդրական ու կառավարման մակարդակների միջև:
- ❖ Արտաքին գնահատումը պետք է իրականացվի նախօրոք սահմանված պարբերականությամբ և հրապարակված ընթացակարգերով¹⁸:
- ❖ Հավատարմագրման փուլի տևողությունը երաշխավորվում է ոչ պակաս, քան 5 և ոչ ավելի, քան 6 տարի: Կրթական ծրագրերի հավատարմագրման ժամանակին և արդյունավետ իրականացումն ապահովելու համար կարևորագույն խնդիր է առանձին ուսումնական մասնագիտությունների խմբավորումն ըստ ավելի լայն մասնագիտական ուղղությունների/ ասպարեզների՝ գնահատման ընդհանուր չափանիշների մշակման նպատակով¹⁹:
- ❖ Երաշխավորվում է նախատեսել հավատարմագրման վերաբերյալ որոշումների 3 տարատեսակ՝ դրական որոշում, բացասական որոշում և պայմանական հավատարմագրում²⁰: Պայմանական հավատարմագրման նպատակն է հնարավորություն տալ ծրագրին՝ սահմանված ժամկետներում լրացնելու չկատարված պահանջները/չափանիշները և այնուհետև ստանալու դրական հավատարմագրում: Պայմանական հավատարմագրման հնարավորությունը խթաններ կստեղծի կրթական ծրագրերի և/կամ բուհերի որակի ապահովման գործընթացների շարունակական բարելավման համար: Պայմանական հավատարմագրմանը հետևող վերագնահատման և հսկողական գործընթացներն իրականացնում է Գործակալությունը:
- ❖ Հավատարմագրման գործընթացի արդյունքները պետք է դրսևորվեն օրենսդրական հստակ ձևակերպումներով և գործնական հետևություններով հավատարմագրվող բուհերի/ծրագրերի վերաբերյալ:

¹⁸ Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Helsinki, 2007. 38p (2nd edition).

¹⁹ Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.

²⁰ Նույնը:

- ❖ Արտաքին գնահատման/հավատարմագրման գործընթացները պետք է խրախուսեն բուհերի առավելագույն արձագանքը կիրառվող չափանիշներին: Այս ուղղությամբ առաջարկվող քայլերից մեկը կարող է լինել այն, որ հավատարմագրման զեկույցները պարունակեն եզրակացություններ, թե որքանով է այս կամ այն ծրագիրը գերազանցում սահմանված չափանիշի նվազագույն շեմը:

2.4. Հաշվետվություն և հաջորդող ընթացակարգեր

- ❖ Որակի արտաքին գնահատման հաշվետվությունները ձևակերպվում են պարզ ու մատչելի ոճով, ընդգրկում են գործընթացի նկարագրությունը, գնահատման առարկայի վերլուծությունը, եզրակացություններ, գնահատման առարկայի բարելավման ցուցումներ և երաշխավորություններ:
- ❖ Հաշվետվությունները հրապարակվում են հաստատության ներսում և դրսում, իսկ օգտագործողները պետք է դրանց օգտակարության և հավաստիության վերաբերյալ կարծիքի և մեկնաբանության հնարավորություն ունենան:
- ❖ Որակի արտաքին գնահատումը չի ավարտվում հաշվետվության հրապարակումով: Գնահատման այն գործընթացները, որոնք եզրափակվում են հաջորդող գործողությունների երաշխավորություններով, պետք է նախատեսեն նաև հետագա ընթացակարգեր՝ նման գործողությունների հետագա պլանավորումը և իրականացումը վերահսկելու համար:
- ❖ Համակարգը պետք է նախատեսի նաև արտաքին գնահատման և հավատարմագրման բացասական որոշումների/եզրակացությունների բողոքարկման հստակ և օրենսդրորեն ամրագրված կարգ՝ բողոքների քննարկման անկախ ներկայացուցչական մարմնի (բողոքարկման հանձնաժողովի) առկայությամբ²¹: Անհրաժեշտ է ապահովել այդ մարմնի գործառնական

²¹ Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Helsinki, 2007. 38p (2nd edition).

անկախությունը՝ նրա անդամների ընտրության սահմանված չափանիշների և բողոքարկման հստակ ընթացակարգերի միջոցով:

2.5. Ուսանողների, արտաքին շահեկիցների և միջազգային փորձագետների մասնակցություն

- ❖ Առաջարկվում է օրենսդրորեն սահմանել ուսանողների պարտադիր մասնակցությունը որակի ներքին գնահատման (ինքնագնահատման) և արտաքին գնահատման գործընթացներում²² (ուսումնասիրական այցերում, արտաքին փորձագիտական հանձնախմբերի կազմում): Անհրաժեշտ են ընթացակարգեր որակի գնահատման գործընթացներում ուսանողների մասնակցության ձևերի վերաբերյալ, որոնք կապահովեն ուսանողների իրական դերակատարությունը և ներգործությունը:
- ❖ Գործակալության կառավարման և խորհրդատվական մարմիններում ընդգրկվում են ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
- ❖ Նախատեսվում է բուհերի և կրթական ծրագրերի արտաքին շահեկիցների, մասնավորապես, գործատուների և շրջանավարտների մասնակցությունը որակի արտաքին (ներքին) գնահատման գործընթացներում՝ համապատասխան տեսակետների և առաջարկությունների հաշվառումով:
- ❖ Այդ մասնակցությունը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.
 - անդամակցություն հավատարմագրման արտաքին փորձագիտական հանձնախմբին;
 - մասնակցություն կրթական ծրագրերի որակից գործատուների և շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հավատարմագրման գործընթացի շրջանակներում իրականացվող հարցումներին (անկետավորմանը):

²² Նույնը:

- ❖ Համակարգի վերակազմակերպման շրջանում ցանկալի է միջազգային փորձագետների ներգրավումը Գործակալության կողմից ստեղծվող արտաքին փորձագիտական հանձնաժողովներում:

2.6. Որակի համակարգային վերլուծություն և վերահսկողություն

- ❖ Երաշխավորվում է, որ 2-3 տարին մեկ անգամ Գործակալությունն ամփոփիչ վերլուծական զեկույց ներկայացնի բուհերի և ծրագրերի արտաքին գնահատման տվյալ շրջանի հիմնական արդյունքների, բարձրագույն կրթության որակի ապահովման ասպարեզում առկա զարգացումների և միտումների, լավագույն փորձի, ինչպես նաև առաջընթացը խոչընդոտող գործոնների և հիմնախնդիրների վերաբերյալ²³:
- ❖ Զեկույցը պետք է հիմք ծառայի բարձրագույն կրթության որակի համակարգային վերլուծության, որակի պետական վերահսկողության, ինչպես նաև որակի ապահովման և բարելավման քաղաքականության մշակման համար:

²³ Նույնը:

3. Երաշխավորություններ որակի ապահովման ազգային գործակալության վերաբերյալ

3.1. Գործակալության առաքելության ձևակերպումը

❖ *Եվրոպական ստանդարտները* պահանջում են, որ որակի ապահովման յուրաքանչյուր ԵԲԿՏ ազգային գործակալություն ունենա առաքելության հստակ և հասարակությանը մատչելի ձևակերպում: Համաձայն 3.5 ստանդարտի ուղենիշների՝ այն պետք է ունենա հետևյալ հիմնական տարրերը.

- հստակ և բացահայտ նպատակներ ու խնդիրներ,
- աշխատանքի բաժանումը Գործակալության և բարձրագույն կրթության որակի ապահովմանն առնչվող այլ շահեկիցների, հատկապես բուհերի միջև,
- համակարգված մոտեցում նպատակների և խնդիրների իրագործման վերաբերյալ:

❖ *Եվրոպական ստանդարտների* հիման վրա առաջարկվում են Գործակալության նպատակների և խնդիրների հետևյալ ձևակերպումները:

Գործակալության հիմնական նպատակներն են.

- Բարձրագույն կրթության ասպարեզում պետական կրթական չափորոշիչների պահպանման վերահսկողությունը;
- Բուհերի և կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատումը և հավատարմագրումը;
- Բուհերի և կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հասարակության իրազեկության ապահովումը;
- Աջակցությունը բարձրագույն կրթության որակի բարելավման և բարձրացման պետական քաղաքականության ձևավորմանը;
- Որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցությանը Հայաստանի մասնակցության ապահովումը:

- ❖ Գործակալության հիմնական խնդիրներն են.
 - Կրթական ծրագրերի և բուհերի արտաքին գնահատման/ հավատարմագրման չափանիշների և ընթացակարգերի մշակումը;
 - Որակի ապահովման ներբուհական համակարգերի գնահատումը;
 - Կրթական ծրագրերի արտաքին գնահատումն ու հավատարմագրումը;
 - Բուհերի ակադեմիական աուդիտն ու հավատարմագրումը;
 - Նորաստեղծ բուհերի և կրթական ծրագրերի լիցենզավորման եզրակացությունների մշակումը;
 - Բարձրագույն կրթության որակի համակարգային վերլուծությունը և որակի բարելավման առաջարկությունների մշակումը;
 - Ընդգրկումը *Որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում*²⁴ և մասնակցությունը այս ուղղությամբ եվրոպական համագործակցության ծրագրերին:
- ❖ Առաքելության ձևակերպումը պետք է ընդհանուր գծերով արտացոլի նաև որակի ապահովման ասպարեզում դերերի և պարտականությունների բաշխումը Գործակալության, բուհերի և նրանց արտաքին շահեկիցների (կառավարություն, գործատուներ և այլք) միջև: Այս պահանջը կարող է իրականացվել նաև Գործակալության խնդիրների համապատասխան ձևակերպումների միջոցով:
- ❖ Առաքելության ձևակերպումը պետք է ցույց տա, որ Գործակալությունն ունի իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու հստակ ռազմավարություն: Գործողությունների պլանը, որով պետք է ուղղորդվի Գործակալության գործունեությունը առանձին խնդիրների ուղղությամբ, կարող է ներկայացվել առանձին փաստաթղթի տեսքով:

3.2. Գործակալության պաշտոնական կարգավիճակն ու անկախությունը

²⁴ Report to the London Conference of Ministers on a European Register of Quality Assurance Agencies. ENQA, Helsinki, 2007. 29p.

- ❖ Կարգավիճակին վերաբերող *Եվրոպական 3.2 ստանդարտը* պարունակում է 2 պահանջ՝
 - Գործակալության պաշտոնական ճանաչումը կառավարության կողմից և համապատասխան օրենսդրական հիմքի առկայությունը,
 - համապատասխանությունը երկրում գործող օրենսդրությանը:
- ❖ Առաջարկվում է, որ նորաստեղծ Գործակալությունն իր կազմակերպարավական ձևով լինի հիմնադրամ, որի հիմնադիրը ՀՀ կառավարությունն է: Նման լուծումը ինքնաբերաբար կբավարարի վերը նշված 2 պահանջներին, եթե Գործակալությունը գործի միայն Հայաստանում:
- ❖ Գործակալության գործառնական անկախությունը գնահատման ենթակա բուհերից, կառավարությունից (նախարարությունից) և այլ արտաքին շահեկիցներից *Եվրոպական ստանդարտների* կենսական պահանջն է, որն ուղղակիորեն արտահայտված է 3.6 ստանդարտում: Գործակալության գործառնական անկախությունը պետք է երաշխավորվի օրենսդրորեն՝ պաշտոնական փաստաթղթերի միջոցով, որոնք հստակ կնկարագրեն նրա իրավասությունը և խնդիրները, ապահովելով նաև գործողությունների որոշակի ճկունություն և ազատություն՝ գործնական ընթացակարգերի անհրաժեշտ ճշգրտումների համար:
- ❖ Առաջարկվում է Գործակալության պաշտոնական կարգավիճակին և անկախությանը վերաբերող դրույթներն ամրագրել *Քարծրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին* օրենքում և Գործակալության կանոնադրությունում, որը կհաստատվի ՀՀ կառավարության կողմից:
- ❖ *Եվրոպական 3.6 ստանդարտի* ուղենիշները ենթադրում են Գործակալության ինքնավարությունն ու անկախությունը, առաջին հերթին, հետևյալ գործառույթներում՝
 - գնահատման ընթացակարգերի և մեթոդների սահմանում և կիրարկում,
 - արտաքին փորձագետների ընտրություն և նշանակում,

– գնահատման արդյունքների (եզրակացությունների, երաշխավորությունների) ձևակերպում:

- ❖ Գործակալության գործառնական ինքնավարությունը պետք է պահպանվի նաև արհեստավարժ և բարձր լիազորություններով օժտված խորհրդի ստեղծումով, որի կազմը կնշանակվի ՀՀ կառավարության կողմից: Առաջարկվում է ստեղծել նաև Գործակալության խորհրդատվական խորհուրդ՝ բոլոր արտաքին շահեկիցների (դասախոսներ, ուսանողներ, շրջանավարտներ, գործատուներ և այլք) լայն ներկայացուցչությամբ²⁵:

3.3. Գործակալության կողմից իրականացվող արտաքին գնահատման գործողությունները և գործընթացները

- ❖ Արտաքին գնահատումը Գործակալության հիմնական գործառույթն է, որն իրականացվում է գնահատման, փորձաքննության, վերլուծության, աուդիտի, հավատարմագրման և նման այլ գործողությունների միջոցով՝ ինստիտուցիոնալ կամ ծրագրային մակարդակներում և կրում է կանոնավոր բնույթ (*Եվրոպական ստանդարտ 3.3*):
- ❖ Արտաքին գնահատման գործընթացները սովորաբար ներառում են հետևյալ 4 կառուցամասերը.
 1. Ինքնագնահատում կամ համարժեք այլ ընթացակարգ, որն իրականացվում է որակի գնահատման գործընթացի սուբյեկտի կողմից՝ սեփական ուժեղ և թույլ կողմերի բացահայտման և արտացոլման նպատակով;
 2. Արտաքին գնահատում փորձագետների խմբի միջոցով, որը Գործակալության որոշմամբ կարող է ընդգրկել նաև ուսանող անդամներ և նախատեսել ուսումնասիրական այցեր;

²⁵ Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.

3. Հաշվետվության հրապարակում՝ արտաքին գնահատման վերաբերյալ եզրակացությունների, որոշումների, երաշխավորությունների և այլ պաշտոնական արդյունքների ընդգրկումով;
 4. Գնահատմանը հաջորդող ընթացակարգեր՝ գործընթացի սուբյեկտի կողմից հաշվետվության երաշխավորությունների իրականացմանն ուղղված միջոցառումների կատարումը ստուգելու համար:
- ❖ Առաջարկվում է, որ որակի ապահովման նորաստեղծ Գործակալությունը սկզբնական փուլում իրականացնի միայն ծրագրային հավատարմագրում՝ հնարավորություն, ժամանակ տալով բուհերին՝ որակի ապահովման իրենց ներքին կառույցները և ընթացակարգերը ստեղծելու համար, այնուհետև՝ երկրորդ փուլում, իրականացնել նաև բուհական ակադեմիական աուդիտ և հավատարմագրում:

3.4. Ռեսուրսներ՝ աշխատակազմ, ֆինանսավորում

Համաձայն *Եվրոպական 3.4 ստանդարտի*՝ Գործակալությունները պետք է ունենան իրենց խնդիրներին և գործառույթներին համարժեք և համաչափելի մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ որակի արտաքին ապահովման գործընթացների արդյունավետ կազմակերպման և կատարման համար:

Գործակալության աշխատակազմը

- ❖ Գործակալության արհեստավարժությունը և գործունեության արդյունավետությունն ապահովելու համար առաջարկվում է.
- Գործակալության աշխատակազմը պետք է ձևավորվի հիմնականում բարձր որակավորմամբ և գերադասաբար փորձագիտական-հետազոտական աշխատանքի փորձ ունեցող մասնագետներից:
 - Անհրաժեշտ է սահմանել աշխատանքի և պատասխանատվությունների հստակ բաժանում Գործակալության հաստիքային կազմի և արտաքին փորձագիտական խմբերի միջև:

- Գործակալության հաստիքակազմն ու բյուջեն պետք է թույլատրեն նրա հիմնական գործառույթների միաժամանակ ու լիարժեք իրականացումը և անհրաժեշտ մեթոդական-տեղեկատվական ապահովումը:
- Գործակալության գործունեության արդյունավետության տեսանկյունից հատկապես կարևորվում են Գործակալության խորհրդի կազմի և գործադիր տնօրենի համարժեք ընտրությունը, որից էապես կախված են նաև Գործակալության գործառնական անկախությունը և նրա առաքելության (նպատակների, խնդիրների) լիարժեք իրականացումը:
- Արտաքին փորձագետների ընտրությունը պետք է կատարվի հստակ ձևակերպված և նախօրոք հրապարակված չափանիշների հիման վրա, պահպանելով գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը:
- Արտաքին փորձագիտական հանձնաժողովների անդամների թվաքանակը երաշխավորվում է 4-5՝ արտասահմանյան փորձագետի ցանկալի մասնակցությամբ:
- Նպատակահարմար է կազմակերպել աշխատակազմի և փորձագիտական կազմի վերապատրաստման և կատարելագործման դասընթացներ՝ որակի ապահովման ասպարեզում առաջատար եվրոպական մասնագետների ներգրավումով:
- Գործակալության կազմավորման փուլում երաշխավորվում է նաև եվրոպական (միջազգային) խորհրդատուների ներգրավումը՝ եվրոպական գործակալությունների առաջատար կազմակերպական-մեթոդաբանական փորձի օգտագործման նպատակով:

Գործակալության ֆինանսավորումը

- ❖ Երաշխավորվում են Գործակալության ֆինանսավորման (ֆինանսական միջոցների ձևավորման) հետևյալ սկզբունքները.
 - 1) Գործակալության վարչական, արտաքին գնահատման/ հավատարմագրման և այլ գործառույթների համար անհրաժեշտ միջոցները ձևավորվում են համաֆինանսավորման սկզբունքով՝ պետական բյուջեից, հավատարմագրման (լիցենզավորման) ենթակա բուհերի պայմանա-

գրային հատկացումներից, Գործակալության կանոնադրությամբ նախատեսված այլ վճարովի ծառայություններից գոյացած միջոցներից:

- 2) Երաշխավորվում է, որ բյուջետային հատկացումները կազմեն Գործակալության ֆինանսավորման առնվազն 50%-ը (կազմավորման փուլում՝ 75%-ը)²⁶:
- 3) Բյուջետային հատկացումները նախատեսվում են հիմնականում հետևյալ գործընթացների համար՝
 - բարձրագույն կրթության որակի պետական վերահսկողություն՝ համակարգային վերլուծություն, պետական բուհերի ակադեմիական աուդիտ, հավատարմագրման/լիցենզավորման պահանջների վերահսկողություն և այլն,
 - Գործակալության մասնակցություն որակի ապահովման եվրոպական և միջազգային համագործակցությանը, համապատասխան եվրոպական կազմակերպություններին և ծրագրերին,
 - միջազգային փորձագետների ներգրավմամբ Գործակալության անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի կազմակերպում,
 - Գործակալության վարչական և զարգացման ծախսեր:

3. Բուհերի հատկացումներն հիմնականում ուղղվում են հավատարմագրման (այդ թվում՝ արտաքին փորձագետների վարձատրության) ծախսերի հատուցմանը, իսկ դրանց չափը որոշվում է Գործակալության մշակած նորմատիվների հիման վրա, որոնք հաշվի են առնում հավատարմագրման սուբյեկտի ուսանողների թիվը, բարձրագույն կրթության հավատարմագրվող աստիճանների կազմը, մասնագիտությունների թիվը և այլ քանակական ցուցանիշներ:

3.5. Գործակալության հաշվետվականությունը

²⁶ Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.

- ❖ Որակի արտաքին ապահովման գործակալությունների սեփական հաշվետվականության ընթացակարգերի պահանջը հանդիսանում է *Եվրոպական ստանդարտների* հիմնական տարրերից մեկը (ստանդարտ 3.8):
- ❖ Համաձայն նշված ստանդարտների՝ Գործակալությունն ինքն էլ պետք է ունենա որակի ներքին ապահովման հրապարակված քաղաքականություն, որը պետք է ձևակերպվի որոշակի ընթացակարգերի ձևով և մատչելի լինի Գործակալության կայքի միջոցով: Այն կարող է ներկայացվել առանձին փաստաթղթի տեսքով կամ որպես Գործակալության ռազմավարական պլանի բաղկացուցիչ մաս:
- ❖ Գործակալության հաշվետվականության ընթացակարգերի փաստաթղթային հենքը պետք է բավարարի նաև հետևյալ պահանջները.
 - Այն պետք է ցույց տա, որ գործակալության գործընթացներն ու դրանց ելքային արդյունքներն արտացոլում են նրա առաքելությունն ու նպատակները:
 - Գործակալությունն իր որակի ներքին ապահովման գործիքակազմում ունի և օգտագործում է արտաքին փորձագետների աշխատանքում շահերի բախումը բացառող մեխանիզմ: Նման մեխանիզմը պետք է կառուցվի արտաքին փորձագետների ընտրության և փորձագիտական խմբերի կազմավորման նախանշված չափանիշների հիման վրա և ի սկզբանե բացառի գնահատման գործընթացներում շահերի հնարավոր բախումը:
 - Գործակալության որակի ներքին ապահովման համակարգը (ընթացակարգերը) ներառում է ներքին հակադարձ կապի մեխանիզմ, այսինքն՝ միջոցներ, որոնք արտացոլում են սեփական աշխատակազմի, Խորհրդի և Խորհրդատվական խորհրդի արձագանքը աշխատանքի որակի նկատմամբ՝ ձևավորելով բարելավող առաջարկություններ և արտաքին հակադարձ կապի մեխանիզմ, այսինքն՝ միջոցներ, որոնք թույլ են տալիս պարզել փորձագետների և գնահատվող բուհերի արձագանքը կիրառվող գործընթացների նկատմամբ՝ հետագա զարգացումների ապահովման նպատակով:

- ❖ Համաձայն *Եվրոպական ստանդարտների*²⁷ պահանջվում է, որ նորաստեղծ Գործակալությունը ենթարկվի պարտադիր արտաքին փորձաքննության՝ առնվազն 5 տարին մեկ անգամ²⁷: Փորձաքննության արդյունքները մի կողմից՝ հիմք են հանդիսանալու ENQA-ին անդամակցության որոշման համար, իսկ մյուս կողմից՝ որոշելու են՝ արդյո՞ք Գործակալությունը կարող է գրանցվել *Եվրոպական գրանցամատյանում* որպես *Եվրոպական ստանդարտներին* համապատասխանող կազմակերպություն:
- ❖ Առաջարկվում է, որ Գործակալությունը արտաքին փորձաքննության հայտ ներկայացնի ENQA-ին իր հիմնադրումից 3 տարի հետո, որը բավարար ժամանակամիջոց կլինի որակի արտաքին գնահատման և հաշվետվականության, որակի ներքին ապահովման սեփական մեխանիզմների և ընթացակարգերի ստեղծման և փորձարկման համար:
- ❖ Միաժամանակ առաջարկվում է սահմանել հնգամյա ժամկետ և մշակել նախապատրաստական միջոցառումների ժամանակացույց-պլան՝ *Որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում* գրանցման պահանջների բավարարման և համապատասխան հայտի ներկայացման համար: Նման պլանավորումը 2 տարի ժամանակ կտա Գործակալությանը՝ արտաքին փորձաքննության արդյունքների և երաշխավորությունների ուսումնասիրման ու հաշվառման համար:

²⁷ Նույնը:

4. Երաշխավորություններ որակի ներքին ապահովման (ներբուհական) համակարգի վերաբերյալ

4.1. Համակարգի ելակետային սկզբունքները, հիմնական նպատակներն ու խնդիրները

- ❖ Որակի ներքին ապահովման բուհական համակարգերի կառուցումը պետք է ուղղորդվի *Եվրոպական ստանդարտներում* ձևակերպված հետևյալ հիմնարար սկզբունքներով.
 - Բուհերն են կրում առաջնային պատասխանատվություն բարձրագույն կրթության իրականացման և որակի համար;
 - Բուհերը հաշվետու են իրենց ուսանողների, գործատուների և ֆինանսավորողների (կառավարություն, հիմնադիրներ, հիմնադրամներ և այլն) առջև՝ իրականացվող կրթության որակի ապահովման համար;
 - Բուհերը պետք է կարողանան հավաստել իրենց կրթության որակը երկրում և միջազգայնորեն;
 - Կրթական ծրագրերի որակը ԵԲԿՏ տարածքում պետք է բարելավվի և բարձրանա՝ ուսանողների և բարձրագույն կրթության մյուս շահեկիցների սպասելիքներին համահունչ:
- ❖ Այս սկզբունքների հիման վրա առաջարկվում են որակի ներքին ապահովման բուհական համակարգի հիմնական նպատակների հետևյալ ընդհանուր ձևակերպումները՝
 1. Երաշխավորել (հավաստել) բարձրագույն կրթության ազգային/եվրոպական ստանդարտների ապահովումը՝ առաջարկվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համար,
 2. ապահովել բուհի հաշվետվականությունը ուսանողների, գործատուների, հիմնադիրների և ֆինանսավորող կազմակերպությունների առջև՝ ուսման որակի առումով,

3. ստեղծել մեթոդական/կազմակերպական հիմք՝ բուհի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար,
 4. խթանել ուսուցման որակի բարելավումը և բարձրացումը, *որակի ներքին մշակույթի* զարգացումը բուհերում,
 5. նպաստել բուհի առաքելության իրականացմանը՝ նրա ստրատեգիական նպատակներին և խնդիրներին համապատասխան:
- ❖ Ձևակերպված նպատակներից բխում են որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ խնդիրները՝
- ապահովել առաջարկվող կրթական ծրագրերի քննարկումը, հաստատումը, պարբերական փորձաքննությունը, մոնիթորինգն ու կատարելագործումը,
 - ստեղծել հնարավորություն՝ կրթական ծրագրերի ստանդարտների և դրանց իրականացման որակի ինքնագնահատումը, արտաքին գնահատումն ու հավատարմագրումը նախապատրաստելու համար,
 - կապ ստեղծել որակի ներքին և արտաքին գնահատման չափանիշների և գործընթացների միջև,
 - նախատեսել որակի ապահովման համար բուհի հաշվետվականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,
 - ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ՝ ուսուցման որակի բարելավման և կայուն բարձրացման համար,
 - որակի ապահովման ընդհանուր համակարգի շրջանակներում ապահովել հաշվետվականության և որակի բարձրացման գործընթացների լիակատար համադրելիությունը,
 - ապահովել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը, դրանցում ուսանողների/շրջանավարտների, գործատուների և արտաքին փորձագետների գործունե ասնակցությունը,
 - ուսանողների համար ստեղծել պահանջվող որակով ուսուցման հնարավորություններ՝ ապահովելով նրանց կողմից կրթական

ծրագրերի և որակավորումների համար սահմանված ստանդարտների/ ելքային կրթական արդյունքների (կարողությունների, ձիրքերի) ձեռքբերումը,

- երաշխիքներ ստեղծել որակի ներքին ապահովման քաղաքականության (ռազմավարության) համապատասխանության համար բուհի առաքելությանը, ստրատեգիական նպատակներին և խնդիրներին:

Այս խնդիրների լուծումը, որին պետք է ուղղվի բուհի որակի ապահովման քաղաքականությունը/ռազմավարությունը, հիմք կստեղծի ձևակերպված նպատակներին հասնելու համար: Կախված բուհի պրոֆիլից և առաքելությունից՝ դրանք կարող են ունենալ այլ կազմ և ձևակերպումներ:

4.2. Համակարգի հիմնական կառուցամասերը

❖ Համաձայն *Եվրոպական ստանդարտների* (մաս 1)²⁸՝ որակի ներքին ապահովման համակարգերը պետք է համապատասխանեն 7 հիմնական ստանդարտների²⁸: Համապատասխանաբար, յուրաքանչյուր ներբուհական համակարգ պետք է պարունակի հետևյալ կառուցամասերը.

1. Որակի ապահովման ռազմավարություն/քաղաքականություն և դրա հետ կապված ընթացակարգեր ու չափորոշիչներ;
2. Ծրագրերի և որակավորումների հաստատման, պարբերական վերանայման և մոնիթորինգի հաստատված մեխանիզմներ;
3. Ուսանողների գնահատման հետևողականորեն կիրառվող և հրապարակված չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր;
4. Դասախոսների կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ;

²⁸ Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Helsinki, 2007. 38p (2nd edition).

5. Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ;
 6. Ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պատշաճ տեղեկատվության հավաքում, վերլուծում և օգտագործում;
 7. Ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերական հրապարակում:
- ❖ Թվարկված կառուցամասերի բաղկացուցիչ ծրագրային/չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի կազմն ու բովանդակությունը պետք է որոշվեն համապատասխան ստանդարտներին ուղեկցող ուղեցույցների (ուղենիշների) հիման վրա, ելնելով կոնկրետ բուհի կառուցվածքային/մասնագիտական առանձնահատկություններից և առաքելությունից: Նախագծվող համակարգը պետք է ապահովի 4.1-ում ձևակերպված նպատակների և խնդիրների լիարժեք իրականացումը:

4.3. Հիմնական մեթոդաբանական սկզբունքներ

- ❖ **Հիմնական մոտեցում որակի ներքին (ներբուհական) ապահովման մեթոդաբանության նկատմամբ:** Յուրաքանչյուր բուհ պետք է ինքնուրույն ձևավորի սեփական մեթոդաբանությունը, հաշվի առնելով բուհում ձևավորված *որակի մշակույթը*, ավանդույթները և սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման սեփական ներուժը: Ստորև ներկայացվող երաշխավորությունները հենվում են այս ասպարեզում եվրոպական առաջավոր փորձի վրա և կողմնորոշիչ բնույթ ունեն:
- ❖ **Համակարգի կենտրոնացված կանոնակարգում և ծրագրային/ընթացակարգային կարգավորում:** Բուհը պետք է ունենա միասնական կանոնակարգային/ընթացակարգային հենք և գնահատման չափանիշներ՝ որակի ապահովման գործընթացների համար, որոնց կիստևեն նրա բոլոր ուսումնական ստորաբաժանումները: Այս մակարդակում հիմնական համակարգող դերը վերապահվում է բուհի

Գիտական խորհրդին, որը պետք է իրականացնի համապատասխան աշխատանքների պլանավորումը, կանոնակարգային/չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, որակի ապահովման նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը: Երաշխավորվում է ստեղծել Գիտական խորհրդի որակի ապահովման հարցերի մշտական հանձնաժողով և որակի կառավարման մասնագիտացված բաժին՝ բուհի վարչական կառուցվածքում: Համակարգի կազմակերպական սխեման որոշվում է որակի ապահովման ներբուհական ռազմավարության մշակման շրջանակներում:

❖ **Որակի ապահովման ներբուհական գործընթացների ապակենտրոնացված իրականացում:** Եթե բուհը ընդհանուր պատասխանատվություն է կրում իր կրթական ծրագրերի որակի համար, ապա առանձին մասնագիտական ասպարեզներում կրթական ստանդարտների և որակի ապահովման գործընթացների իրականացման համար պատասխանատու են հիմնականում ֆակուլտետները (դեպարտամենտները): Համապատասխանաբար, բուհի մասնաճյուղերը պատասխանատու են իրենց կրթական ծրագրերի որակի ապահովման համար: Որակի ապահովման ապակենտրոնացված գործընթացների համապատասխանությունը համաբուհական միասնական չափանիշներին ապահովվում է կանոնակարգային/ընթացակարգային միասնական հենքի և որակի ապահովման կենտրոնական կառույցների միջոցով:

❖ **Ղասախոսական և վարչական կազմի ընդլայնված մասնակցություն:** Բուհը պետք է ապահովի ղասախոսական կազմի և վարչակազմի ամենալայն մասնակցությունը որակի պահպանման և բարելավման գործընթացներում, խթանի անհատական և թիմային նախաձեռնությունները՝ բուհի որակի ապահովման համակարգի շրջանակներում: Թեև այս հարցերը հիմնականում լուծվելու են տեղային (ֆակուլտետ, դեպարտամենտ) մակարդակով, սակայն գիտական խորհուրդը պետք է համապատասխան վերահսկողության մեխանիզմներ ունենա:

❖ **Կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն:** Անկախ արտաքին փորձագետների ներգրավումը հատկապես կարևորվում է նոր

ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի քննարկման և հաստատման, ինչպես նաև գործող ծրագրերի որակի մոնիթորինգի գործընթացներում: Արտաքին փորձաքննության նշանակությունը հատկապես մեծ է այն դեպքերում, երբ նոր ծրագրերի հաջողությունը կամ գործող ծրագրերի կենսունակությունը կապված են որոշակի ռիսկերի հետ, կամ երբ ներքին փորձաքննությունը չի հանգեցրել որոշակի եզրակացությունների:

❖ **Ուսանողների, շրջանավարտների և գործատուների ներգրավում:**

Ուսանողների, շրջանավարտների և գործատուների գործուն մասնակցությունը որակի ապահովման ներբուհական գործընթացներում համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է, ինչպես նաև *Եվրոպական ստանդարտների* պահանջը: Գերադասելի են մասնակցության հետևյալ ձևերը (ոլորտները)՝

- կրթական ծրագրերից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրություն,
- կրթական ծրագրերից (ելքային արդյունքներից) գործատուների բավարարվածության ուսումնասիրություն,
- ինքնավերլուծության/ինքնագնահատման ինստիտուցիոնալ և տեղային (ֆակուլտետային, դեպարտամենտային) գործընթացներ:

❖ **Փոխադարձ կապ որակի ներքին և արտաքին գնահատման**

գործընթացների միջև: Որակի ներքին գնահատումը արտաքին գնահատման հիմքն է և պետք է կառուցվի վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառումով: Մյուս կողմից, բուհի ակադեմիական աուդիտի հիմնական նպատակն է՝ գնահատել որակի ապահովման ներբուհական գործընթացների արդյունավետությունն ու լիարժեքությունը: Այսպիսով, բուհի ինքնավերլուծությունը/ինքնագնահատումը հիմնական փոխկապակցող օղակն է որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացների միջև:

Երաշխավորվող գրականության ցանկ

1. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Helsinki, 2007. 38p (2nd edition).
2. Report to the London Conference of Ministers on a European Register of Quality Assurance Agencies. ENQA, Helsinki, 2007. 29p.
3. Terminology of Quality Assurance: Towards Shared European Values? ENQA Occasional Papers 12, Helsinki, 2006. 40p.
4. European Standards and Guidelines in a Nordic Perspective. Joint Nordic Project 2005-2006. ENQA Occasional Papers 11, Helsinki, 2006. 64p.
5. Student Involvement in the Processes of Quality Assurance Agencies. ENQA Workshop Reports, Helsinki, 2006. 48p.
6. Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.
7. Mapping external quality assurance in Central and Eastern Europe. A comparative survey by the CEE network (Central and Eastern European Network of Quality Assurance Agencies in Higher Education). ENQA Occasional Papers 8, Helsinki, 2006. 69p.
8. Guidelines for National Reviews of ENQA Member Agencies, 2006. 8p.
9. Quality Convergence Study. A contribution to the debates on quality and convergence in the European Higher Education Area. ENQA Occasional Papers 7, Helsinki, 2005. 25p.
10. Accreditation Models in Higher Education. Experiences and Perspectives. ENQA Workshop Reports 3, Helsinki, 2004. 67p.
11. Quality procedures in European Higher Education. An ENQA survey, ENQA Occasional Papers 5, Helsinki, 2003. 41p.

12. Benchmarking in the Improvement of Higher Education. ENQA Workshop Reports 2, Helsinki, 2003. 38p.
13. A Method for Mutual Recognition. Experiences with a method for mutual recognition of quality assurance agencies. ENQA Occasional Papers 4, Helsinki, 2002. 43p.
14. Quality Assurance in the Nordic Higher Education. Accreditation-like practices. ENQA Occasional papers 2, Helsinki, 2001. 38p.
15. Quality Assurance Implications of New Forms of Higher Education. Part 1: A Typology. ENQA Occasional Papers 3. Helsinki, 2001. 20p.
16. Institutional Evaluations in Europe. ENQA Workshop Reports 1, Helsinki, 2001. 40p.
17. International Initiatives and Trends in Quality Assurance for European Higher Education. Exploratory Trend Report. ENQA, Helsinki, 2000. 38p.
18. Guidelines for Quality Provision in Cross-border Higher Education. OECD, 2005. 44p.
19. Quality and Recognition in Higher Education. The Cross-border Challenge. Centre for educational research and Innovation. OECD, 2004. 209p.
20. Enhancing Consumer Protection in Cross-border Higher Education: Key Issues Related to Quality Assurance, Accreditation and Recognition of Qualifications. OECD/Norway Forum on Trade in Educational Services Managing the internationalisation of post-secondary education, Norway 2003. 18p.
21. Quality and Internationalisation in Higher Education. Programme on Institutional Management in Higher Education. OECD, 1999. 270p.
22. Embedding Quality Culture in Higher Education. A Selection of Papers from the 1st European Forum for Quality Assurance (23-25 November, 2006). EUA Case Studies 2007. 99p.
23. Quality Culture in European Universities: A Bottom-Up Approach. Report on the Three Rounds of the Quality Culture Project 2002–2006. EUA publication, Brussels, 2006. 42p.

24. Review of Quality Assurance in Irish Universities: Sectoral Report (jointly commissioned by the Higher Education Authority and the Irish Universities Quality Board). An EUA Institutional Evaluation Programme, 2006. 34p.
25. Review of Quality Assurance in Irish Universities: Effectiveness of the Quality Assurance Procedures in Irish Universities. University Reports (jointly commissioned by the Higher Education Authority and the Irish Universities Quality Board). An EUA Institutional Evaluation Programme, 2006. 134p.
26. Developing an Internal Quality Culture in European Universities. Report on the Quality Culture Project 2002– 2003. EUA publication, Brussels, 2005. 53p.
27. Quality Assurance: A Reference System for Indicators and Evaluation Procedures. EUA publication, Brussels, 2004. 54p.
28. Indicators for Institutional and Programme Accreditation in Higher/Tertiary Education. UNESCO/CEPES Studies on Higher Education, Bucharest, 2004. 179p.
29. Quality Assurance and Accreditation: A Glossary of Basic Terms and Definitions. UNESCO/CEPES Papers on Higher Education, Bucharest, 2004. 84p.
30. Quality Assurance and the Development of Course Programmes. UNESCO/CEPES Papers on Higher Education, Bucharest, 2002. 223p.
31. Quality Assurance in Higher Education in the Russian Federation. UNESCO/CEPES Papers on Higher Education, Bucharest, 2001. 126p.
32. Handbook for institutional audit: England and Northern Ireland. The Quality Assurance Agency for Higher Education, 2006. 48p.
33. Quality assurance in UK higher education: A guide for international readers. Quality Assurance Agency for Higher Education 2005. 33p.
34. Information on quality and standards in higher education. Final guidance. Higher Education Council for England, 2003. 43p.

35. Implementing Quality Assurance Standards in the European Higher Education Area – The Way Forward. Norwegian Agency for Quality Assurance in Education (NOKUT). “The Point of View of the European Agencies” Seminar Materials, 3-4 July 2006. 15p.
36. Handbook of Standards for Quality Management in French Higher Education Institutions. Comité national d'évaluation, Paris, 2006. 31p.
37. The Guidelines of Good Practice for Quality Assurance Agencies. INQAAHE, 2005. 5p.
38. A Comparative Analysis of Systematic Quality Work in Nordic Higher Education Institutions. Nordic Quality Assurance Network in Higher Education. Helsinki, 2005. 163p.
39. Internal Quality Assurance at Higher Education Institutions. Requirements and Good Practices. OAQ/CRUS Conference. Notes taken during the Workshop. Bern, December-2005. 17p.
40. Internal Quality Assurance at Higher Education Institutions. Requirements and Good Practices. OAQ/CRUS Conference. Brief summary of the Seminar interventions. Bern, December-2005. 9p.
41. Criteria for Accrediting Engineering Programs. Effective for Evaluations During the 2005-2006 Accreditation Cycle. Engineering Accreditation Commission. ABET, 2004. 24p.
42. Accreditation Policy and Procedure Manual. Effective for Evaluations During the 2005-2006 Accreditation Cycle. ABET, 2004. 26p.
43. Quality Enhancement at Programme Level: The Tuning Approach. The report of the Tuning Educational Structures in Europe project, 2004. 11p.
44. A Framework for Quality in Irish Universities. Meeting the Challenge of Change. Conference of Heads of Irish Universities. Dublin, 2003. 82p.
45. Improving Teaching & Learning Resource. Draft for 2003 workshops. Council on Higher Education and Higher Education Quality Committee. 89p.

46. Working on the European Dimension of Quality. Report of the conference on quality assurance in higher education as part of the Bologna process, Amsterdam, 12-13 March 2002. 107p.
47. A Next Generation of Quality Assurance Models. Paper for the CHER 14th Annual Conference “Higher Education and its Clients: Institutional Responses to Changes in Demand and in Environment”. Center for Higher Education Policy Studies. Dijon, 2-4 September, 2001. 17p.
48. Handbook of Accreditation: Standards, Institutional Review Process, Policies and Practices. Accrediting Commission for Senior Colleges and Universities / The Western Association of Schools and Colleges, 2001. 145p.
49. European Student Handbook on Quality Assurance in Higher Education. An ESIB (The National Unions of Students of Europe) publication. 80p.
50. ՀՀ Օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, ընդունված 14.12.2004թ.
51. ՀՀ Օրենքը Կրթության մասին, ընդունված 14.04.1999թ.
52. Կարգ Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման: Հաստատված է ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N372 որոշմամբ:
53. Կարգ Հայաստանի Հանրապետությունում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման: Հաստատված է ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N372 որոշմամբ:
54. Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: Երևան, Բարձրագույն Կրթության Ռազմավարական Հետազոտությունների ազգային կենտրոն, 2007. 214 էջ:

Հավելված. Երաշխավորություններ բարձրագույն կրթության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշների վերաբերյալ

Սույն հավելվածում բերված են եվրոպական փորձագիտական խմբի կողմից²⁹ երաշխավորվող չափանիշների կազմն ու տիպային ձևակերպումները, որոնք կարող են կիրառվել բարձրագույն կրթական ծրագրերի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներում: Երաշխավորությունները, որոնք մշակված են կոնկրետ երկրի՝ Պորտուգալիայի դեպքի համար, արտացոլում են որակի արտաքին ապահովման համար *Եվրոպական ստանդարտներով և ուղենիշներով*³⁰, ինչպես նաև *ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր հենքով*³¹ (*Դուբլինյան բնութագրիչներով*³²) սահմանված ընդհանուր պահանջները:

Բերված չափանիշները բնորոշ չեն մասնագիտական որևէ ասպարեզի, ունեն ընդհանուր ձևակերպումներ՝ կիրառելի բարձրագույն կրթության բոլոր կրթական ծրագրերի գնահատման համար: Ենթադրվում է, որ դրանք պետք է ուղեկցվեն մասնագիտական ասպարեզին բնորոշ որոշակի չափանիշների մշակումով, որոնք պետք է գնահատեն կոնկրետ մասնագիտական ձիրքերի և կարողությունների անհրաժեշտ կազմը և ձեռքբերման հնարավորությունը՝ գնահատվող ծրագրի շրջանակներում:

Ա. Ծրագրի նպատակները և կազմակերպումը

- Կրթական ծրագրի (բակալավր, մագիստրոս) նպատակները և կազմակերպումը ապահովում են երկրի համապատասխան օրենսդրության պահանջները;

²⁹ Quality Assurance of Higher Education in Portugal. An Assessment of the Existing System and Recommendations for a Future System. ENQA Occasional Papers 10, Helsinki, 2006. 95p.

³⁰ Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Helsinki, 2007. 38p (2nd edition, part 2).

³¹ A Framework for Qualifications of the European Higher Education Area. Bologna Working Group on Qualifications Frameworks. Ministry of Science, Technology and Innovation of Denmark. February 2005. 200p.

³² Shared 'Dublin' descriptors for Short Cycle, First Cycle, Second Cycle and Third Cycle Awards. A report from a Joint Quality Initiative informal group. 18 October 2004. 5p.

- Ծրագրի նպատակները հստակորեն ձևակերպված և հասանելի են հանրությանը;
- Նպատակները գործողությունների են վերածված այնպես, որ հնարավորություն տան գնահատելու դրանց կատարման աստիճանը;
- Նպատակները մշակված և ձևակերպված են՝ հաշվի առնելով աշխատանքային շուկայի կարիքները և պահանջները՝ դրանց առավել լայն սահմանամբ:

Բ. Բովանդակությունը և կառուցվածքը

- Ծրագրի բովանդակությունը համապատասխանում է ծրագրի նպատակների իրականացմանը (ինչպես, օրինակ, դասախոսությունների և ուսուցման այլ տարրերի զուգակցությունները և առաջնայնությունները, հավասարակշռությունը պարտադիր և ընտրովի դասընթացների, ծրագրի մակարդակի ու ընդգրկման տիրույթի միջև);
- Ծրագիրը համապատասխանում է ուսումնական պլանի ծավալին ներկայացվող ձևական պահանջներին;
- Ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և այլ տարրերի տարբեր զուգակցությունների և առաջնայնությունների ընտրությունը պայմանավորված է սովորողների կրթական առաջընթացի ապահովմամբ;
- Ծրագրի բովանդակությունը ներառում է և տեսական և գործնական տարրեր;
- Ծրագիրը բավարարում է աշխատանքային շուկայի համապատասխան կարիքներին և պահանջներին՝ դրանց լայն ձևակերպմամբ:

Գ. Կարողություններ

- Ծրագիրը ձևակերպել է ելքային կարողություններ, որոնք համադրելի են *Որակավորումների եվրոպական հենքին/Դուբլինյան բնութագրիչներին* (առկայության դեպքում՝ նաև որակավորումների ազգային հենքին);

- Շնորհվող որակավորումները համապատասխանում են տվյալ մասնագիտական ասպարեզի Հայաստանյան և արտասահմանյան նմանատիպ կրթական ծրագրերի համար սահմանված չափանիշներին;
- Կարողությունները միաժամանակ ձևակերպված են և՛ ուսումնական բովանդակության, և՛ գործնական կիրառությունների տերմիններով;
- Կարողությունները հստակորեն արտացոլում են ծրագրում կիրառված ակադեմիական և դիտակտիկ (ուսուցողական) սկզբունքները, որոնք համապատասխանում են շնորհվող որակավորմանը/աստիճանին և իրատեսական են ծրագրերի տևողության առումով:

Դ. Դասավանդման մեթոդները

- Դասավանդման և ուսումնառության մեթոդներն արտացոլում են ծրագրի նպատակները;
- Դասավանդման և ուսումնառության մեթոդներն արտացոլում են այն ակադեմիական և դիտակտիկ սկզբունքները, որոնք աջակցում են ծրագրի նպատակների իրականացմանը:

Ե. Քննական մեթոդները

- Քննական մեթոդները հստակորեն արտացոլում են ակադեմիական և ուսուցողական սկզբունքները և աջակցում են ծրագրի նպատակների իրականացմանը;
- Քննական մեթոդներն աջակցում են ծրագրով նախանշված կարողությունների ձեռքբերմանը;
- Քննական մեթոդները համաձայնեցվում են ամբողջ ծրագրի ընթացքում՝ ապահովելու համար սահմանված բոլոր կարողությունների և այլ կրթական արդյունքների ձեռքբերումը:

Զ. Դասախոսական կազմը և գիտահետազոտական աշխատանքը

- Ղասախոսների ակադեմիական/ուսումնական, հետազոտական և մանկավարժական որակավորումները համարժեք են ծրագրի նպատակներին:
- Ուսանողներին շարունակաբար հրամցվում են տվյալ ասպարեզի առաջավոր հետազոտական արդյունքները և մեթոդները՝ զարգացնելով այսպիսով ծրագրերի կրթական միջավայրը;
- Ծրագիրը գրավիչ է որակյալ դասախոսների և հետազոտողների համար և ունի նրանց հետագա հավաքագրումը երաշխավորող ռազմավարություն;
- Ղասավանդումը/ուսուցումը մեծամասամբ իրականացվում է այն առաջատար գիտնականների և հետազոտողների միջոցով, որոնք նպաստում են տվյալ առարկայական ոլորտի զարգացմանը;
- Հիմնական հաստիքային դասախոսական կազմի կողմից իրականացվող դասավանդումը լրացվում է դրսից (օրինակ, արդյունաբերությունից և այլ համալսարաններից) հրավիրված մասնագետների դասախոսություններով կամ գործնական դեպքերի վերլուծություններով:

Է. Ընդունելությունը, ծրագիրն ավարտելու ժամկետը և ցրման տոկոսը/ աստիճանը

- Ընդունելության պայմանները համարժեք են և բավարար՝ ծրագրի ակադեմիական պահանջների բավարարման համար;
- Ծրագիրը կարող է հաջողությամբ ավարտվել սահմանված ժամկետում;
- Մեթոդաբար վերահսկվում է ծրագրի ավարտման ժամկետը և ուսանողների ցրման տոկոսը, կանոնավոր կերպով համեմատելով դրանք առնչվող այլ ծրագրերի արդյունքների հետ՝ գնահատելու համար ընտրված ռազմավարության արդյունավետությունը և այն բարելավելու նոր ուղիները:

Ը. Ասպիրանտուրա (դոկտորական ծրագրեր)

- Ասպիրանտների հավաքագրման/ընդունելության մակարդակը բավարար է ապագա հետազոտական կարիքները հոգալու համար:

Թ. Ինֆրակառուցվածք (շենքեր, սարքավորում)

- Ինֆորմացիոն ենթակառուցվածքը/տեխնոլոգիաները բավարար են ծրագրի նպատակներն իրականացնելու և նախանշված կարողությունները ձեռք բերելու համար;
- Ուսումնական տարածքները և սարքավորումները բավարար են ծրագրի նպատակներն իրականացնելու համար և նպաստում են դասավանդման ու հետազոտությունների զարգացմանը:

Ժ. Շրջանավարտներ և աշխատատեղեր

- Շրջանավարտներից, գործատուներից, աշխատանքային շուկայի ներկայացուցիչներից և այլ առնչվող կազմակերպություններից հակադարձ կապն ապահովող կանոնավոր տեղեկատվություն է հավաքվում և օգտագործվում ծրագրի շարունակական զարգացման համար;
- Կանոնավոր կերպով ուսումնասիրվում/հսկվում է ծրագրի շրջանավարտների զբաղվածության աստիճանը, պարբերաբար համեմատելով այն համանման այլ ծրագրերի ցուցանիշների հետ:

Ի. Միջազգայնացում

- Ծրագիրն ունի միջազգայնացման ռազմավարություն;
- Միջազգայնացումը արտացոլված է ծրագրի բովանդակության մեջ և առարկայական ծրագրերում;
- Ծրագիրն ուսանողներին արտասահմանում սովորելու, իսկ դասախոսական կազմին՝ արտասահմանում դասավանդելու և հետազոտական գործունեության հնարավորություններ է տրամադրում;
- Առկա է արտասահմանյան ուսանողներ ներգրավելու և նրանց ինտեգրումը դյուրացնելու ձգտում:

Լ. Որակի ապահովում

- Ծրագրի գործառնական նպատակներում և ընթացակարգերում իրականացվել է բուհի որակի ապահովման ընդհանուր ռազմավարությունը;
- Ծրագրի մակարդակում հստակորեն սահմանված է պատասխանատվությունը որակի ապահովման մեխանիզմների համար;
- Որակի ապահովման մեխանիզմներ են գործում ծրագրի հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման փուլերում;
- Ուսանողների գիտելիքների գնահատումները հիմնված են հրապարակված չափանիշների, սկզբունքների և ընթացակարգերի վրա, որոնք հետևողականորեն կիրառվում են;
- Առկա են գնահատման համապատասխան ընթացակարգեր՝ պարզելու համար, թե դասախոսներն ունե՞ն դասավանդելու համար բավարար կարողություններ և որակավորում, իսկ գնահատման արդյունքները մատչելի՞ են արտաքին փորձաքննության համար;
- Ղասավանդման գործընթացը պարբերաբար և հետևողականորեն գնահատվում է: Այս գործընթացը այլ նպատակների հետ մեկտեղ պետք է ներառի նաև հակադարձ կապի մեխանիզմներ՝ ուսանողների կարծիքը ստանալու համար;
- Ուսանողի ուսումնառությանն աջակցող առկա ռեսուրսները համարժեք են և բավարար՝ ծրագրի խնդիրների համար;
- Հավաքվում, վերլուծվում և օգտագործվում են ծրագրի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ վիճակագրական տվյալները;
- Ծրագրի վերաբերյալ հրապարակվում է բավարար ծավալով որակական և քանակական բնույթի նոր և անաչառ տեղեկատվություն;
- Ծրագրերի և դրանց դասավանդման գնահատումներին հետևում են բարելավմանը միտված հետագա համակարգված գործընթացներ: Գնահատումների արդյունքները և հետագա գործողությունների պլանները հրապարակվում են բուհի կայքում: